ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

2001 թվականի հոկտեմբերի 22-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հանդիսությունների դահլիճը լեփ-լեցուն էր: Այդ օրը ճեմարանավարտ հինգ սաներ՝ չորսը սարկավագ, մեկը՝ քահանա, պետք է պաշտպանեին իրենց ավարտաճառերը: Ժամը 15.00-ին, երբ ավարտաճառերի հեղինակներն իրենց հարազատների, հոգևոր հայրերի, սարկավագների և Ճեմարանի ուսանողների հետ սպասում էին պաշտպանությունն սկսելուն, դահլիճ մտան քննիչ հանձնաժողովի անդամները՝ Գերաշնորհ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանի գլխավորությամբ: Հանձնաժողովի անդամներն էին՝ Հոգեշնորհ Տ. Բագրատ աբդ. Գալստանյանը, Ճեմարանի դասախոսներ Հրաչյա Միրզոյանը, Հակոբ Քյոսեյանը և Գնել Գրիգորյանը: Պաշտպանությունը նախագահում էր Գերաշնորհ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանը:

Պաշտպանությունն սկսվեց Տերունավանդ «Հայր մեր»-ով և «Իմաստութիւն Հօր Յիսուս» (Ն. Շնորհալի, «Հաւատով խոստովանիմ») աղոթքով: Այնուհետև հանձնաժողովի նախագահ Սրբազան Հայրը ողջունեց բոլոր ներկաներին և սկսեց առանձին-առանձին ներկայացնել ավարտաճառերի հեղինակներին և նրանց թեմաները:

Առաջինը պաշտպանության հրավիրվեց Արմեն սրկ. Հակոբյանը, որի ավարտաճառի թեման էր՝ «Հայ Եկեղեցու վախճանաբանությունը և ժամանակակից կրոնական շարժումների վախճանաբանական հայացքների քննությունը» (ղեկավար՝ Տ. Ղևոնդ քհն. Մայիլյան): Սամվել սրկ. Սիմոնյանի ավարտաճառի թեման էր՝ «Խրիմյան Հայրիկի գրական կերպավորումը հայ գրականությունում» (ղեկավար՝ Վարդան Դևրիկյան): Վարդգես սրկ. Մանուկյանի ավարտաճառի թեման էր «Դրվագներ Ղպտի Եկեղեցու միջնադարյան պատմությունից» (ղեկավար՝ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյան): Արարատյան Հայրապետական թեմից Տ. Մարգիս քհն. Չոփուրյանի, որը պաշտոնավարում է Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում իբրև ծիսակատար քահանա, ավարտաճառի թեման էր՝ «Սևանի մենաստանը» (ղեկավար՝ Սանդրո Բեհբուդյան): Վերջում՝ «Պետրոս արքեպս. Բերդումեան-Աղամալեան Նախիջեւանցի, «Մեկնութիւն Յայտնութեանն Յովհաննու» (ղեկավար՝ Հակոբ Քյոսեյան) վերնագրված իր ավարտաճառի բանավոր պաշտպանությամբ հանդես եկավ Վարդգես սրկ. Մայիլյանը:

Բոլոր պաշտպանողներն էլ հանգամանալից ներկայացրեցին իրենց աշխատանքները, ապա պատասխանեցին քննիչ հանձնաժողովի անդամների հարցերին: Ավարտաճառերի բանավոր պաշտպանությունից հետո հանձնաժողովի նախագահ, Գերաշնորհ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանն ասաց, որ հանձնաժողովը պետք է առանձնանա վերջնական գնահատության համար, որից հետո Գերաշնորհ Սրբազան Հայրը հայտնեց գնահատականները. Արմեն սրկ. Հակոբյան՝ «բավարար», Սամվել սրկ. Սիմոնյան՝ «բավարար», Տ. Մարգիս քհն. Չոփուրյան՝ «լավ», Վարդգես սրկ. Մանուկյան՝ «քաջալավ», Վարդգես սրկ. Մայիլյան՝ «քաջալավ»:

Այնուհետև ավարտաճառեր պաշտպանողներին իր շնորհավորանքի խոսքը հղեց Հունահայոց թեմի առաջնորդ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանը: Նա նախ շնորհավորեց բոլորին Վեհափառ Հայրապետի անունից, ապա տվեց իր հայրական պատգամը՝ հորդորելով և ասելով, թե Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու սպասավորը պետք է գիտությամբ լուսավոր լինի, հավատքով՝ հզոր, որպեսզի կարողանա մյուսներին էլ իր լույսով լուսավորել և իր ունեցած հավատքը նրանց փոխանցելով՝ մեղքի գերությունից ազատել: Մենք՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի ուսանողներս, միանում և շնորհավորում ենք նրանց՝ մաղթում եկեղեցասեր ու հայրենանվեր ծառայություն՝ «ի փառս Սուրբ Երրորդութեան եւ ի պանծացումն Առաքելական Սուրբ Եկեղեցւոյս Հայաստանեայց»:

Ավարտաճառերի հաջորդ պաշտպանությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում տեղի ունեցավ սույն թվականի նոյեմբերի 6-ին: Հանձնաժողովը, որի կազմում էին Գևորգյան Հոգևոր Ճեմարանի դասախոսներ Հրաչյա Միրզոյանը, Հակոբ Քյոսեյանը և Գնել Գրիգորյանը, ղեկավարում էր Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը: Պաշտպանությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանները, Ճեմարանի տեսչական կազմը, ուսանողությունը, ինչպես նաև ավարտաճառերի հեղինակների հարազատները: Պաշտպանության էին հանձնված վեց աշխատանքներ: Ավարտաճառերի պաշտպանության հանձնաժողովը որոշեց բանավոր ներկայացման հանձնել դրանցից միայն չորսը՝ Արսեն սրկ. Ծաղոյանի «Կաթոլիկ քարոզչությունը Հայաստանում 17-րդ դարում» (աշխատանքի ղեկավար՝ Ավետիս Հարությունյան), Տիգրան սրկ. Եղիազարյանի «Հայ Եկեղեցին ընդդեմ «Մունականներ» կամ «Միավորման եկեղեցի» աղանդի» (աշխատանքի ղեկավար՝ Տ. Ղևոնդ Քահանա Մայիլյան), Հովհաննես սրկ. Խաչատրյանի «Հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունները 9-11-րդ դարում» (աշխատանքի ղեկավար՝ Գնել Գրիգորյան) և Արմեն սրկ. Եզեկյանի «Ս. Եփրեմ Խուրի Ասորին հայ մատենագրության մեջ» (աշխատանքի ղեկավար՝ Հակոբ Քյոսեյան):

Պաշտպանությունն սկսվեց Սրբազան Հոր օրհնությամբ: Այնուհետև ըստ կարգի ներկայացվեցին պաշտպանության հանձնված ավարտաճառերը, որից հետո յուրաքանչյուր ավարտաճառի հեղինակ ամփոփ կերպով ներկայացրեց իր աշխատանքը պատասխանելով հանձնաժողովի անդամների հարցերին, ապա հանձնաժողովը, առանձնանալով վերջնական գնահատության համար, հայտնեց արդյունքները. Արսեն սրկ. Ծաղոյան՝ «բավարար», Տիգրան սրկ. Եղիազարյան՝ «բավարար», Հովհաննես սրկ. Խաչատրյան՝ «բավարար», և Արմեն սրկ. Եզեկյան՝ «բավարար»:

Արգասաբեր հովվական ընթացք մաղթենք ապագա ուսյալ քահանայացուներին՝ նրանց նվիրական, քրիստոնեանվեր առաքելության մեջ, և այս աշխատությունները թող դառնան նրանց ակնկալվող հոգևոր-գիտական գործունեության սկիզբը:

ՄՀԵՐ ԾԱՏՈՒՐՅԱՆ
ՀԱՅԿ ԴՊԻՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ